

թեամբ զբռնելն մը հրատարակեց. — յո-
րում՝ սուրանեան և իրանեան ժողովրդոց
մէջ եղած յարաբերութիւնը կը բացատրէ :
Զանազան ծանօթութիւններ կու տայ շայտց
ազգին և աշխարհին վրայ :

ՅԵՆԵԱՅԻՐ



Ք Ա Ղ Ա Ք Ո Կ Ա Ն Ա Մ Ի Ս

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 20



Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ն Ա Ն Ա Ն Գ Ք Ե Ի Ս Պ Ա Ն Ի Ա

Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ն Ա Ն Ա Ն Գ Ք Ե Ի Ս Պ Ա Ն Ի Ա
Վերջնական հայտնութեան մը համար թ Պարիզ
գումարուած երկուց Պետութեանց Դեպտանա-
ժողովը, շատ ծանօթութեամբ կը յաւանջէ նա
մանաւանդ ղտուարին և անհամամայն վիճակի
մը մէջ կը գտնուի՝ մասնաւորապէս Փիլիսոփայեան
կղզեաց պատճառաւ :

Ամերիկացիք՝ Մանիլայի տերերուն իրա-
ւունք մը ստացած կը համարին ամբողջ Փի-
լիսոփայեանց վրայ, և կամ կ'ուզեն զննել կէս մի-
լիարով : Սպանիացի նուիրակք բացարձակա-
պէս կը պնդեն, որ Սպանիա չի կրնար հրաժա-
րել փիլիսոփայեանց գերիշխանութենէն : Այս աս-
րանքներովն իրենք քիչ քիչ այնպիսի կերպարանք
մը կ'առնու, որ մինչև կը սպառնայ պատճառ
ԸՄԱՐԼԵ ղեկավարածողովին ցրուելուն և թըշ-
նամութեանց սկսելուն : Ամերիկացիք ցարդ Ի-
րենց պահանջներէն կէտի մը վրայ տեղիք
առած յեն : Միացեալ Նահանգք որ երբեմն
կը խորշէին աշխարհակալութենէ և կ'ընդդի-
մանային աշխարհակալութիւն փափագող ժո-
ղովրդոց, հիմա կը սկսին ցուցնել՝ որ հարա-
զատ ծնունդք են Անգլիոյ ժողովրդեան և ոչ-
ուայն : Նիւ Եորքէն հեռագիր մը կը ծանուցանէ՝
որ ամերիկացի նուիրակք հրահանգ ընդու-
նած են, եթէ մինչև Նոյեմբերի 23 սպանիացի
նուիրակք չընդունեն Միացեալ Նահանգաց
արդար պահանջքը, բանակցութիւնները ընդ-
հատեալ հաշակել և զինադադարումը վերցունած :
« Այն ատեն Ամերիկա զօրութեամբ պիտի
ձեռք բերէ, ինչ որ չկրցու ղրևանագիտական

միջոցներով ո՛ր և կ'ըսուի՝ որ երկու բանակք
անմիջապէս բռնեն զՆուրա և զՓիլիսոփայեան :
Սպանիացիք կը պահանջեն, որ շահնաժողովը
Զինադադարման հիմունքներէն դուրս չելլէ, և
կը ծանուցանեն՝ որ շեն կրնար ընդունել Ամե-
րիկացոց պահանջքը : Սիրով յանձն կ'առնու՝
որ իրաւարար իշխանութիւն մը զըսուի : Եւ ե-
թէ իրենց արգար ղիտողութիւնքը չըսուին, այն
ատեն պիտի բողոքեն ընդդէմ Ամերիկացոց
պահանջներուն և պիտի թողուն զՊաշտածո-
ղովը : Բայց յետոյ... :

Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ն Ա Ն Ա Ն Գ Ք

Միացեալ Նահանգաց մէջ կատարուեցան՝
գաւառներուն կառավարաց և Համաժողովին
(congrés) ընտրութիւնք, որոնք այս տարի ար-
տաքայ կարգի կարեւորութիւն մը առած էին
ներկայ քաղաքական պարագայից պատճա-
ռաւ : Մէկմէկու ղէմ՝ կը կուռէին հասարա-
պետականք՝ որք կողմնակիցք են աշխարհա-
կալութեան, մշտնջենաւոր բանակաց և ծո-
վային զօրութեան անելուն, և ռամկավարք
որոց սիրելի է պահել Միացեալ Նահանգաց
նախկին ամփոփ ծրագրը : Հասարակապետա-
կանք շահեցան մեծամասնութիւն մը, թէպէտ
յոյժ նուազ Համաժողովին մէջ, և իրենց թիկն-
ածուն Ռուսովելտ, որ միանգամայն յամբողջ կը
կարծուի Մըկքենիէյի ընտրուեցուա կառավա-
րել Նիւ Եորքէ վիճակին : Յայտնի է, որ յԱ-
մերիկա ընտրութեանց մէջ մեծ դեր կը կա-
տարէ դրամը, և երկու կուսակցութիւնք ան-
համար գումարներ ծախեցին այս առթիւ :

Բ Բ Ա Ջ Ի Լ

Նոյեմբեր 18ին Բրազիլի Նոր նախագահն կամ
բոս ԵՆԼԼԵՍ, անցաւ իշխանութեան զըսելու, յոր-
դորելով Աւետարդով մը զգաւառս յարմարելու
Հասարակապետական ձևոյն որ հաստատուն
վարչութիւն մը զարձա Բրազիլի համար և
պախարակելովը գաւառաց բաժանողական ձըգ-
տուանները : Ապա նոր պաշտօնարան մը անուա-
նեց :

Ա Ն Գ Լ Ի Ա

Ա Ն Գ Լ Ի Ա — Գ Ա Լ Լ Ի Ա Ա Ա Ա Ն Խ Ն Դ Ի Ր

Երբ անգլիական լրագրութիւնը բարձրաձայն
գրչեր մը Գալլիսոցոց և Ֆրանսոց գտնուելուն
ղէմ՝ Պարիզի կառավարութիւնը իբր տեղե-
կաբեր կոչեր էր թ Գահիրէ և սպա թ Պարիզ՝

Մարշան գնդապետի նիդակակիցներէն մին՝ զհարիւրապետն Բարատրի: Հազիւ Բարատրի եմկներ էր յՃղիպտօսէ, երբ յանկարծ լսուեցաւ՝ որ Մարշան գնդապետը ևս մեկներ էր ի Գահիրէ: Այն օրուէն յայտնի էր՝ որ Գալլիա տեղիք պիտի տար և պիտի ընդունէր Անգլիոյ պահանջը՝ անպայման թողլով զՅաջագա: Մեծին Բրիտանիոյ երազ և ահաւոր պատերազմական հանդերձանքը և Մանչի մէջ զորաւոր նաւատորմի մը յանկարծուս ներկայութիւնը, մեծ ապաւորութիւն ըրեր էին Գալլիոյ վարչութեան վրայ, որ թէպէտ ի սկզբան զիւսանդափական միջոցներով շնանցեր էր ցուցընել՝ որ Հարաւային Սուտան շատոնց լքեալ էր յՃղիպտօսէ, որով և Մարշալ անսեր մնացեալ երկիրները գրաւեր էր, և սակայն Գնդիմ մատնեմին պատճառաբանութիւնք աւելի զայրացուցեր էին անգլիացի լրագրութիւնը: Ի Գալլիա ևս ամէն կուսակցութիւն միասիրտ յուզեալ էր և հայրենասիրական ոգւով մը կ'ուզէր պաշտպանել « ազգային այս դատը »: սակայն վարչութիւնը, որ երբեք չէր կրնար զԳալլիա այնքան զորաւոր բռնել՝ որ Անգլիոյ հետ կուսեղուս վիճակի մէջ քունուի, համակամեցաւ տեղիք տալու, կոչելով առանց պայմանի մը զՄարշան: Գալլիա յետ 1871ի, սակէց աւելի մեծ մահացուցումն և պարտութիւն չէր կրած: Փաշտոյտ ելքը, պատերազմ մը կրողնեղու հուստար համարուեցաւ: Եւ սակայն Պաշտօնաբանին հակառակորդք անգամ, բռնելով Գալլիոյ դրութիւնը, հայրենասիրական ոգւով մը, չուզեցին այսպիսի մեծ նւթ մը խօտարանին մէջ իրր զենք մը գործածել ընդդէմ վարչութեան, չուզեցին որ նոյն իսկ խօսուի այդ նւթիոյ վրայ: Ձեր կարելի մեծագոյն հայրենասիրութիւն և միանգամայն խոչընդութիւն ցուցընել:

Այսպէս Սոլզբրի առանց զինուց մեծ յաղթանակ մը կը տանէր, այնքան մեծ որ կարծես Փաշտոյտի անունը մոցնել կու տար Օնգրումանի յաղթանակը, և լրտ Գիշըրը, որ Բարատրի հարիւրապետին հետ նաւարկելով հասեր էր ի Մարսիլիս և ի Պարիզ, ի Լոնդրա, իւր յաղթական շքեղ ընդունելութեանց մէջ Օնգրումանէ և խորթուսէ աւելի շնեց ուրախակցութիւնք Փաշտոյտի ճարտար գրաւման նկատմամբ: Սոլզբրի ընդդիմակցեց ևս յայտնեցին իրենց մեծ գահութիւնը՝ այս յաղթանակին նկատմամբ:

Ա Ի Ս Ս Ի Ա

ՅԱւատրիա և ի Հուճարիա՝ խորհրդարանաց մէջ կը շարունակեն անպառը և՛ անկիրը վեճաբանութիւնք՝ աւտարիա-հուճարական համաձայնութեան նկատմամբ: Ի Բուզա Պէշա ընդդիմակցեց խափանող միջոցները կը շարունակեն: Ձախակողմանք սկսան անձնական պատերազմ մը ընդդէմ Բանֆիի՝ և Նոյիմբեր Յին առաջարկեցին՝ որ առաջին պաշտօնեայն զազտնի գումարամաք դատուի, իրեն մեծամեծ գեղձմունքներ զործող վերջին ըմտութեանց մէջ: Նոյեմբեր 17ի գումարման մէջ՝ մինչև Խորհրդարանի « զուրս վճուուի Բանֆի » գուշեցին: Բայց առաջին պաշտօնեայն հանդարտութեամբ հասկացուց, որ եթէ խորհրդարանը չբուճարէ համաձայնութիւնը, կան խորհրդարանէ զուրս միջոցներ զայն ընդունելի ընելու: Արդէն մեծամասնութիւնը իւր կողմն է, և իրեն առաջարկած առժամանակեայ Ելիզաւետոյը նշանաւոր մեծամասնութեան մը ծափահարութեամբք թուարկուեցաւ:

Նոյեմբեր 7ին դարձեալ կոմսն Թուսն ամբաստանուած էր՝ լեզուաց նկատմամբ Հըսամինի համար: Կոմսն Թուսն արութեամբ պաշտպանեց ինքզինքը: Եւ որովհետև լեհ երեսփոխանք կողմակիցք երեցեր էին առաջին պաշտօնեայն նոցա զէ՛մ յարձկեցան ծանօթ զերման երեսփոխանքն Ե՛տօնէրը և Վոյթի: Յետինս զլեհացին կոչեց, «Ազգ հացկատակ»: Ահաւոր շփոթութիւն մը ծագեցաւ և լեհ երեսփոխանք կուշեցին զգերման երեսփոխանս « աւազակ, զող »:

Բայց գերման կուսակցութեան մէջ պատակաւ մունք աղէն սկսած են, և ապահով կը համարուի վարչութեան յաղթանակը, առանց բռնադատելի միջոցներու դիմելու:

Քաղաքական այսպիսի պատահարաց ծամանակ, ի Վեննա ուրիշ տխուր արկածք՝ գրաւեր էին բովանդակ աշխարհի ուսումնական և առողջապահական ուշադրութիւնքը: Բո՛րչկն Միւլլըր, որ յետ ուսումնասիրելուս զժամանակաւոր մտանց ի Հնդկաստան, բերած էր իւր հետը նորա լրագրել, և ծանախտի զէ՛մ փորձերու կը զբարձր՝ հիւանդանոցին մէկ անկիւն մը գանազան կենդանեաց վրայ: Ձի զիւսցուիք թնչ անգլիաշտեմամբ՝ վարակեցաւ այդ ահաւոր ախտէն այդ փորձերու մէջ իրեն օգնող ծառայն, որ մեռաւ, և զոր դարմանելով անոր հիւանդութիւնը առին հիւանդապահ կիւնը և բժշկին Միւլլըր-որ դիւցազնական արութեամբ հանդարտ քայ-

լից ի դերեզման կրօնական պատրաստութիւններով և մշտնջենաւոր հրաժեշտի ողջունները և որո՞ւմարմանութիւնները կրկնով իւր ընտանեաց: Բոլոր Աւստրիա և բարձր ուսումնական աշխարհը յուզեցաւ, և ստորագրութիւնք կը հաւաքուին մահարձանի մը համար: Մեռաւ նաև հիւանդագահ կինը, և այսպէս վերջացաւ արխան վարկերու երկիւղը:

Պ Ա Լ Լ Ի Ա

Ի Փալլիս խօսարանին բացուելուն, երեսփոխանաց մեծամասնութեան փափաքն էր՝ պաշտօնարանէն բացատրութիւն մը լսել Իրէյֆուսական խնդրոյն նկատմամբ: Չոր վարչութիւնը վերաքննութեան ճամբուն մէջ զրբեր էր: Պատերազմի պաշտօնեայն Շունուան, որ մինչև այն ատեն համամիտ կը համարուէր իւր պաշտօնակցաց, հակադրէյֆուսական երեսփոխանաց քննարարութիւնէն զրգոհելու յանկարծ զիմեց բեմը և ի մեծ զարմացումն բոլոր խօսարանին, ծանոյց թէ Իրէյֆուսի խնդրոյն նկատմամբ, ինքն ալ նոյն կարծիքն ունէր, ինչ որ ունէին իրմէ առիչ պատերազմի պաշտօնեայք, և թէ խօսարանին առջև կու տար իւր հրատարականը ի պաշտօնէութիւնէ: Ձայն ըսաւ և անմիջապէս՝ աճապարանօք մեկնեցաւ բեմէն և խօսարանէն: Կրնայ զուշակուիլ այս անակընկալ հարուածոյն ազդեցութիւնը: Պաշտօնարանին նախագահը Բրիտանոս՝ ծանոյց որ բնաւ նախնապէս տեղեկութիւն մը չունէր եղածին վրայ, և ցարդ մէջերնին կարծեաց տարածանութիւն մը չէր եղած: Աւրիշ հասարակապետական նշանուոր երեքփոխանք՝ իրենց ցաւը յայտնելով հանդերձ առաջարկեցին, որ քուէարկուի, « Փաղաքական իշխանութեան բարձրութիւնը զինուորական իշխանութեան վրայ »: Այս առաջարկը քուէարկուեցաւ զրեաթէ լիովին չայնելով, ապա առաջարկուեցաւ բանակին վառահեղութեան քուէ մը, որ ստացաւ 880 ձայն ընդդէմ 2 քուէէց: Յետոյ Պաշտօնարանին վրատահութեան քուէարկութիւնը մերժուեցաւ 286 քուէէք ընդդէմ 154 քուէէց:

Պաշտօնարանը՝ այս հակառակ քուէին վրայ անմիջապէս հրատարեցաւ և նախագահը ընդունեցաւ հրատարականը: Յետոյ Ծէլիքս Յոր՝ յետ սովորական խորհրդակցութեան՝ Եար Տիւֆելտ յանձնեց կազմել նոր պաշտօնարան մը, որ յաջողեցաւ փութով և նոր պաշտօնարանին մէջ կը մտնէին Յրէյսինէ իւր պաշտօնեայ պատերազմի, Պէյտրալ պաշտօնեայ Ալմաիցի Լոքըրուս կը մնար պաշտօնեայ ծովային զորու-

թեան և Դէլլասուէ՝ պաշտօնեայ Արտաքին Գործոց: Ի Փալլիս քիչ անգամ այսպէս դիւրին վերջացած է պաշտօնարանական տագնապ մը:

Նոր պաշտօնարանը Նոյեմբեր կին ներկայացաւ խօսարանին և ծանոյց որ հաւատարմ խօսարանի արտայայտած կամայք, ինքն ալ կը հրատարակէ՝ որ զինուորական իշխանութիւնը պէտք է ենթարկուած մնայ քաղաքականին և թէ պաշտօնարանը պիտի սպասէր և յարգէր զստաւորաց վէճը նկատմամբ զրէյֆուսական խնդրոյն, զի Ատենական իշխանութիւնը պէտք է ազատ ըլլայ և քան անկախ Ապահովուց որ Պաշտօնարանը պիտի զործէր յենլով հասարակապետական մեծամասնութեան վրայ և վերջացուց խօսքը: Ըսելով որ Փալլիս հանգստութեան պէտք ունի 1900ի Յուլուսահանդէսը պատրաստելու համար: Պաշտօնարանին ծանուցմունքը մեծ ծափահարութեամբք ընդունելի եղան և պաշտօնարանը վստահութեան վրայ 429 քուէ ունեցաւ ընդդէմ 64 քուէէց:

Հոկտեմբեր 28ին՝ վճռաբեկ ատենը, յետ Հոստորական ճարտարախօսութեան Բարդ Խորհրդականին և Մոնար՝ Տիկին Իրէյֆուսի փաստարանին, յայտնած էր որ կարելի էր ընդունիլ Գատին վերաքննութեան համար աղբոր մը, և թէ Ատենը իւր կողմանէ նախկին քննութեանց Զաւելուած քննութիւն մը պիտի կատարէր: Հոկտեմբեր 31ին սկսան այս Զաւելուած քննութիւնը և կանչուեցան իբր վկայք նաև նախկին պատերազմի պաշտօնեայք՝ Մէրսիէ, Բիլլո, Կազէնեաք, Յուրլինտեն և Շունուան: Ընդհանուր կարծիքն այն էր որ Պատերազմի պաշտօնեայք, այնպիսի փաստեր պիտի յայտնեն, որ ի սպառ պիտի խափանուի վերաքննութիւնը: Եւ սակայն վճռաբեկ Ատենը որոշեց վերաքննութիւնը, հրամայեց վարչութեան որ Իրէյֆուսի ծանուցումն այս ուրոշողութիւնը որչափ կարելի է փութով և Փաղթախանութեանց պաշտօնարանը իմացուց վճռաբեկ Ատենին արդէն Իրէյֆուսի ծանուցած ըլլալը: Հաւանական է որ Իրէյֆուս մարտանաւով մը փոխադրուի ի Փալլիս, իւր անձը պաշտօնակցելու համար: Զինուորական զատուտուն մը երբեք աստակազոյն հարուան էր ընդունած չէ և զատաստանին եղած մեղադրութիւնը, յայտնի է պէտք է ունենայ իւր ազդեցութիւնը զատուտաց նկատմամբ:

Պ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Հոկտեմբեր 25ին Գուլիէլմոս Բ և կայսրուհին մեկնեցան ի Կ. Պոլսոյ, ուր սերտ բարեկամու-

թիւն մը յայտնած էր Սուլտանին, փոխադարձն ընդունելով Սուլտանէն, բովանդակ թուրք ժողովրդեան համակրանքը և շնորհակալիքը: Արդիւ Համիդ բառ արեւելեան ճոխ բարեկարգ, շքեղ ընծաներով պատուած էր իւր կայսերական հիւրերը, նոյնը բրած էր նաեւ ի. Պլաշոյ քաղաքագետութիւնը: Գարնեալ Գուլիէլմոս Բ. Քիւլիֆ կայսրութեան Արտաքին Գործոց պաշտօնէին ձեռնով ստացիք եր' վաճառականական և երկաթուղիական շատ մը նշանաւոր պայմաններ: Ըստեցաւ, որ նոյն իսկ թուրք-գերման դաշնակցութիւն մը կատարուած ըլլայ ընդ Սուլտան և ընդ Գուլիէլմոս Բ. որուն յետին կը խոստանար պաշտպանել սոսմանեան կայսրութեան փոքր Ստիլոյ բովանդակ կայսրութիւնը: Գերմաններոյ կայսրը և կայսրուհին՝ Լուիսեմբեր 27ին հասան ի Եսֆա և 30ին հանդիսապէս հետոտես մտան յերուսաղէմ և անմիջապէս զնային այցելելու Ս. Գերեզմանին, ուր զիրենք ընդունեցան լատին, յայն և հայ պատրիարքունք, և զորո սպա պատուեց շքանշաններով: Յետոյ կատարեց հանդիսաւոր ելանանկաւ նարազանդ ստանարին բացուում:

Գուլիէլմոս Բ ի զ. Պօրտիզուած ժամանակ, զնած էր յերուսաղէմ « Անցք Սուրբ Կուսին » ըսուած հողը. այդ երկիրը նուրեց հանդիսապէս կաթոլիկ գերմանական ընկերութեան և այս իւր նուէրը հետադարձ մը ծանոյց Հռովմայ Գահանայապետին:

Գուլիէլմոս Բ՝ ընդհանուր Եւրոպոյի քաղաքական կացութեան պատճառաւ սակուս ինչ համառօտեց իւր ուղեւորութեան ճամբան: Նոյեմբեր 3ին մեկնեցաւ յերուսաղէմէ, կին էր ի Եսֆա, 7ին ի Բէլջուտ, և 8ին ի Գամաւկոս, ուր շքեղ ընդունելութիւն մը ունեցաւ, և ուր ինքն ալ ներդրեց զՍուլտան Սալաուտին: Այդ ներդրեանը իւր քննադատք ունեցաւ նոյն իսկ գերման լրագրութեան մէջ: Ի Գամաւկոսէ մեկնեցաւ Հոռոտի ճամբով ի Մալթա, և անկէ ի Սեփիլիա, ուսկից Պալաի (Աւաղրիա) ճամբով կը դառնայ ի Գերմանիա:

Ի Տ Ա Լ Ի Ա

Նոյեմբեր 16ին բացուեցան Իտալիոյ Նորհրդաբանք Պապի ճառով մը, յորում Ամբերդո թագաւորը յիշելով մի առ մի անցեալ խօսարանական շրջանին մէջ թէ՛ ցաւալի և թէ՛ ուրախակի դէպքերը, կը յաւելուր՝ որ Իտալիա Եւրոպոյի խաղաղութեան համար ունեցեր էր իւր ազդեցութիւնքը, և Իտալիա, Գալլիա, Անգլիա հաւաներ էին զործագրել Իտալիոյ առաջ-

արկած ծրագիրը նկատմամբ կրեռէի: Ինչպէս նաև անիշխանականաց հակառակ դեպքանս. ժողովոյ մը հրաւերը, լիովն ընդունելութիւն դառն էր: Արդէն ամէն տերութիւնք տնուանած են իրենց նուիրակքը և փութով դեպսանածողով կը զուսմարու ի Հռովմ:

Ուրիշ փոքր պատահար մը կարծիր ծովու վրայ, ընդ Գալլիա և ընդ Իտալիա, ի սկզբան զժողութեան վախ մը տուաւ, բայց երկու կողման ալ վարչութեանց խոհեմութեամբ, զրեաթէ խնդիրը յարմարած կը համարուի: Գալլիացի պաշտօնակալ մը Պետութեան Սկրիպտին նաւով հասնելով ի Ռահէլյա, որ Աֆարներու փոքրիկ զեղ 21է կարծիր ծովու վրայ, Բաբել-Մանդերի ճոս, քանի մը սակարներով (զինուոր տեղացի) ցամաք կ'ելլէ: Ռահէլյայի Իտալացի հրամանատարը փութով ջրկառով մը հոն կը հասնի, որուն զալլիացի պաշտօնակալը կը պատասխանէ՝ որ ինքը կը կարծէր Գալլիոյ հողին վրայ կոխել: Ապա կը քաշուի թողլով անշ իւր երկրորդ և երկու սակարներ: Իտալացի հրամանատարն ալ կը թողու հոն կէս ջրկառ մը: Եւ երկու կողմն ալ կը դիմեն իրենց վարչութեան: Պէտք է գիտնալ որ Ռահէլյայի սուլտան մը՝ Համիդէ լյոտան, Գալլիոյ հովանաւորութիւնը խնդրած էր, ընդարձակելով զալլիական Օթոմէ քաղթականութեան սահմանքը մինչև Սինտիան, որ Իտալական Առաքի մաս կը կազմէ: Համիդէ լյոտան սուլտանի յաջորդը Բուրան՝ նոր դաշինք մը բրաւ իտալացւոց հետ, ընդարձակելով նոցա կարուածքը: Ներկայ սուլտանը, թուն Համիդէ լյոտանի, շուրջ ճաննալ իւր նախորդին ըրած դաշինքը, և Իտալական վարչութիւնը վնասառնու պատերազմական նաւը շրկեց որ ըլլանց զԻտալիայ, և սուլտանը փախաւ և ապաւինեցաւ յՕթոմէ՝ Գալլիացւոց հովանաւորութեան ներքև: Այս լրոյն վրայ Գալլիոյ վարչութիւնը յից Սկրիպտին մարտանաւը, ինչպէս ըսինք:

Սակայն երկուց Պետութեանց վարչութիւնք ալ կը փափակուի որ հաշտութեամբ և սիրով լիննայ խնդիրը, և այս առթիւ գծուին պաշտօնական սահմանք, որպէս զի յապագային թիւրիմացութիւնք ըլլան:

Նոյեմբեր 21ի Հեռագիրք կը ծանուցանեն՝ որ Գալլիոյ և Իտալիոյ մէջ այնքան տարիներէ ի վեր վիճաբանեալ վաճառականական դաշինքը վերջապէս հաստատուեր է: Այս առթիւ Գալլիոյ վարչութիւնը՝ Պատուոյ լիցէնտի մեծ ծաղաւենը տուաւ կանէվարո ծովակալին՝ պաշ-

տօնեայ արտաքին գործոց և Լուսցցադի, որ նախկին պաշտօնեայ Ելեմսից յիտալիա, ներկայիս կը գտնուէր ի Գալլիա և դադարնապէս կ'աշխատէր այս գործոյն յարմարութեան :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Թագաւորական ընտանիքը որ կը գտնուէր ի Գանիմարքա, զարձաւ ի Պերէնս և Աթէնք և շատ եռանդուն և սիրալիկ ընդունելութիւն գտաւ ժողովրդէն, մանաւանդ տարածուած ըլլալով այն լուրը թէ Գեորգիոս իշխանը կրէտէի բարձրագոյն գործակատար անուանուէր էր չորս պետութիւններէն :

Թագաւորին պալատէնէն վերըը Չայմիս պաշտօնարանը հրաժարեցաւ փոփոգելով որ կըրկին նորագուած ներկայանայ խօսարարին : Թագաւորը զարձեալ Չայմիսի յանձնեց պաշտօնարարին կազմութիւնը :

Զ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Զինական արքունեաց կացութիւնը խորհրդաւոր և անթափանցելի կերպարանք մը առած է : Ամենազիւ լուրեր հռչակուեցան կայսեր նկատմամբ . նախ թէ թաւնաւորուեցաւ, ապա թէ մեռած է : այժմ կ'ըսուի որ ունի Աղբառանդր Գ Չարին հիւանդութիւնը :

Այս ամէնը թերեւս շինծու լուրեր են, իւր ձեռքէն իշխանութիւնը առնելու նպատակաւ : Այս յայտնի է որ արքունեաց մէջ մեծ ընդդիմութիւն մը ձեռացած էր իրեն զէմ որուն զիտի էր մայր կայսրուհին, Եւրոպացաց յամենայնի սեղիք տալուն համար : Հիմայ մայր կայսրուհին է որ կը կառավարէ և այս իւր կառավարութեան նեցուկ առած էր բազմութիւնական մը որ Պէքէնի քով հաւաքեր էր և զոր բանադատուեցաւ ցրուելու : Եւրոպիոյ պետութեանց բողոքին վրայ : Անգլիա ամէն զիպաց պատրաստ ըլլալու համար, զօրաւոր նաւատորմի մը կազմեր էր ի Ռէյ-Նայ-Վէյ, զոր ցրուեց առ ծամա, բայց միշտ շինական ծովերուն մէջ պահելով : Եւրոպիոյ պետութիւնք կը սպասեն նոր բաժիններու, արդէն Ռուսստան զինուորապէս բանեց նաև Նիու-Չուանի նաւահանգիստը և Անգլիա անհնար է որ հաւասար մաս մը չընդունի : Զինաստանի վարչութիւնը շփոթ դրութեան մը մէջ կը գտնուի : զոր աւելի եւս կը շփոթեն՝ զինքը չըլլապատող եւրոպացի պետութիւնք : որոնք զիմած են զօրացեալ աւարտութեան մը : Ներկայիս մեծ

մրցում և պայքար կայ երկաթուղեաց շինուելիք նոր գծեր ձեռք բերելու :

Ռուսիա Մանչուրիի մէջ իւր ստացած մասը և Պորտ Արթուրը շատ յառաջադէմ վիճակի մէջ դրած է, փութով հետազերք, թղթատարութիւնք ապահով վիճակ առած են : Անգլիոյ լրագրիք կը խօսին ընդդէմ վարչութեան, որ անհոգ մնացած է նկատմամբ Ռէյ-Նայ-Վէյի :

Ս Պ Ա Ն Ի Ա

Ի Սպանիա հրաժարեցաւ պաշտօնեայն Գոմար, որովհետև համամիտ չէր իւր ընկերաց հետ՝ նկատմամբ Ֆրանչէրսո երեսփոխանին բանտարգելութեան՝ խմբազարպետ Նյացիոնայ լրագրին, որ յօշուած մը հրատարակած էր՝ թէպէտ արգիլուած ի գրաքննութենէ :

Այս հրաժարականը ունեցաւ իւր մեծ շառաւը և կը կարծուէր՝ որ բովանդակ պաշտօնարանը բանադատուի հրաժարելու : Ինչպէս հրաժարած էր նաև պատրիարքի պաշտօնեայն : Բայց սորա հրաժարականը ընդունելի չեղաւ : և Սագաղա ծանոյց թագուհւոյն, որ Միացեալ Նահանգաց հետ զաշխարհագրութեան ծանր և դժուարին պարագայից մէջ՝ պաշտօնարարն մը փոփոխութիւն կրնար ստիարարը ըլլալ հայրենեաց :

Ս Ե Ր Տ Ի Ա

Սերբիա միշտ տագնապեալ դրութեան մը մէջ կը գտնուի՝ Միլան թագաւորսօցոր ներկայութեան պատճառաւ ի Սերբիա : Երբեք Ռուսիա չի կրնար հաշտ աչքով տեսնել այդ ներկայութիւնը :

Բէլգրատէն հետազեր մը կը ծանուցանէ, որ երբեմն թագապահ՝ Ռիստիլ երեսփոխանը, խօստացած է թագաւորին, ազատական կոտակցութիւնք պահել, զուր թողլով միայնակ զինբարքը՝ նորա երիտասարդ առաջնորդը, հաւանակորդ թագաւորական ցեղին, և ապա ազատականներէն վարչութիւն մը կազմելով, դատապարտել տալ զՌիբարաց իբրև յանցաւոր ընդդէմ Նսրին Վեհափառութեան, ինչպէս եղեր էր քիչ ամիս առաջ Պայիշ՝ Արմատականաց առաջնորդին :

Սերբիա, ինչպէս նաև Բուլղարիա, ստեպ բուլղոներ կը յղեն առ Բ. զուր, որ իրենց պետութեան սահմանները չեն յարգուիր կամ յԱլբանիացուց և կամ ի Թուրք զինուորաց :